

tiser» լրագիրը, որ յունվարի 26-ի հրովարտուով արգելված է անորոշ ժամանակով:

Բրիտանական դեսպանի անձնասիրութիւնը վիրաւորված է, որովհետեւ Բ. Դուռը ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց, և կարծես այդ դեռ բաւական չէր, Դուռը մինչև անգամ մի շքանշանով էր պատուեց նրա հակառակորդ Խաչիկ փաշային, իսկ անգլիական լրագիրն այն պատճառով պատժեց, որովհետեւ նա սկսեց պաշտպանել անգլիական դեսպանին, և աստիկ յարձակողական ու թշնամական յոգուածներ գրել թիւրքաց կառավարութեան դէմ: Բացի այս՝ նա համարձակեց յարձակել սուլթանի արտօնութիւններէ վրա, և ամեն նաանկայի խօսքերով պախարակեց Խաչիկի շքանշանը:

Յօդուածագիրն ասում է, որ այդ շքանշանով սուլթանը զարդարեց պատերազմական արքայի կուրծքը, և ամենանախկին համեմատութիւններ է անում Խաչիկ փաշայի և պոլիցիական մինիստրի մէջ: Իսկապէս առաջ ոչինչ նշանակութիւն չունի անգլիացոց համար լրագիրներէ դադարեցնելը, որովհետեւ ինչպէս «Levant Herald» նորից դուրս է գալի «Le Matin» անունով լրագրի գիմակի տակ, այնպէս էլ «Commercial Advertiser» լրագիրը կարող է մի ուրիշ լրագրի գիմակի տակ դուրս գալ:

«Le Matin» լրագիրն իր վերջին համարներէ մէկի մէջ աստիկ սպառնալիքներով էր խօսում: Թիւրքիայի դէմ: Նա ասում է, որ ռուս-թիւրքական պատերազմը Ֆրանսիայի օժանդակութեամբ կը դիւրացնի յունական հարցի վճիռը, և կը պատրաստի թիւրքաց պետութեան քայքայումը: Վերջինիս լրագրի արգելման հրովարտակը ստորագրեց Մէհմէդ Ենէֆէկէթ էնէֆէդին, որը նորերում նշանակվել է տպագրութեան բաժնի գլխաւոր, այն ինչ առաջ երկար ժամանակ միայն գլխաւորի օգնական էր: Այդ բաժնի նախկին գլխաւորի՝ Հայ Պէրաթ-էնէֆէդինի փոխելու պատճառը գլխաւորապէս պէտք է որոնել այն բանի մէջ, որ նա չափից դուրս ներողամիտ էր դէպի նորերս արգելված անգլիական օրգանի յանդուգն յօդուածները և դրանից առաջ ևս դէպի «Թէրքիան» հայ լրագրի յօդուածները: Այս լրագրի խմբագիրները, ինչպէս յայտնի է, նորերս բանտարկեցան և դատի կենթարկվին այն յօդուածներէ պատճառով, որոնց համար տպագրութեան վարչութեան գլխաւորից միայն նախազգուշութիւն էին ստացել:

Յունական հարցը տեղեց չէ շարժվում, մի կողմից այն պատճառով, որ Սուլթանը միշտ յետաձգում է իրադէի ստորագրելը, որը անհրաժեշտ է սահմանական գիծը որոշելու համար, իսկ միւս կողմից, որովհետեւ այս գծի համար կազմած նոր նախագիծը Անգլիայից դեռ ևս հաւանութիւն չէ գտել: Բ. Դուռը ևս, որքան կարող է ամեն միջոցներ գործ է դնում, որ ամենքի ցանկացած զուսինեան հարցի վճռելը ձգձգվի: Սակայն փաշան կրկին առաջարկեց փոխանակել կալուածները և վարձատրութիւն տալ Գուսի-նեան և Պլավեան նահանգներին համար, որոնք Թիւրքիային կը մնան: Բայց Ձերնօգորիայի իշխան Նիկողայսը մերժեց այդ փոխանակութիւնը: Երէկ, յունվարի 26-ին, Սալաս-փաշան յետաձգեց դիպլոմատներին ընդունելութեան օրը, որովհետեւ պէտք է ներկայ գրանվել մինիստրների խորհրդի նստին, մի քանի նշանաւոր հարցեր վճռելու համար: Չը նայելով մաքսական հարկերի կանոնաւոր ըստացվելուն, պալատը փողի այնպիսի կարօտութիւն ունի, որ անցեալ շաբաթ այնքան փող չունէր, որ կարողանար վճարել պալատի միս հայթայթողներին: Բայց հաստատում են նոյնպէս, որ սուլթանը սովորութիւն ունի իւրաքանչիւր ամիս բաւական նշանաւոր զուամբներ ուղարկել անգլիական բանկերը և որ նրա յետ գցած փողերը անցեալ տարի

հասան բաւական նշանաւոր զուամբի՝ 80,000 թիւրքական լիրայի (1,900,000 ֆրանկ): Բրուսայից եկող ծանապարհորդները հաստատում են, որ այնտեղ մեծ պատրաստութիւններ են տեսնվում, վաղ թէ ուշ, սուլթանի աթոռահատ տեղը տեղափոխելու այն քաղաքում, որտեղ գտնվում է Սամանի դամբարանը և որը, շատ կարելի է, կը լինի նրա սերունդի գերեզմանը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պօլս 26 յունվ.

Ազգային ընկերութեանց միացման խնդիրն բաւական ժամանակ է որ կը յուզուի, և զի դեռ չը կար հաստատ իրողութիւն մը, չուզեցինք բան մը գրել: Այս խնդիրն Տիգրիսէն ծագում առաւ: Մըշակութիւնը զարկ մը տուաւ, յամառութեամբ գործայն ետեւն ընկաւ և ամեն ջանք ըրաւ որ երեք ընկերութիւնք ի մի ձուլուին: Հարկ էր որ ընկերութիւնք այս կարծիքներն ի նկատի առնուին: Ազատ ու է կանխակալ համոզումներէ՝ ընկերութեանց վարչութիւններն կը սկսեն բանակցել միասին թէ այսպիսի ձուլում մը օգտակար է թէ վնասակար: Խնդիրն ձեռ կարծածին չափ հեշտ չէր, նախ պէտք էր գիտնալ թէ միացեալ զօրաւոր ընկերութիւն մը կառավարութեան կողմէ վերաւանդի մը կենթարկուէր թէ ոչ: Այս հարցը բաւական ժամանակ սպառեց, բաւական խորհրդածութիւններ տեղի ունեցան և ազգային պետական անձանց կարծիքն առնուեցաւ: Համոզում մը գոյացաւ թէ միացեալ ընկերութեան խոհեմութիւնը ամեն վտանգի առաջ կընայ առնուլ, և զի այդ ընկերութիւնք ցարկ շատ զգոյշ չարժեքան, ուստի իրենց ընթացքէն չեղելու երկիւղ մը չը կար:

Այս միջոցիս թէ հոս և թէ հոգ սխալ և անհիմն հրատարակութիւններ լինելով, պահ մը մըտքերն պղտորեցան, բայց հանդարտութիւնը չուտով տիրեց: Քաղաքական խնդրէն յետոյ դրամական խնդրի վրայ: Պօլսոյ մէջ հայք այսօր երեք ընկերութեանց հաւասարապէս նուէր կուտան, արդեօք յետ միացման պիտի չարձանկեն այսպէս. և թէ ինչ որ երեքն առանձին կը հաւաքէին, միացեալն նոյնը կամ աւելին պիտի ընէ թէ ոչ: Բաւական առեւ ալ այս խնդիրն դրանց: հաշուետեւութեան նայուեցան, նուիրատուաց վիճակն ուշադրութեան առնուեցաւ, այս մասին ալ զոյացած համոզումը միացման նպատակաւ էր:

Կային ուրիշ խել մը հարցեր զորս զանց կառնուի և կուգամը կազմակերպութեան եղանակին: Երեք ընկերութեանց կազմակերպութիւնը տարբեր է: Վարչատեսակները բոլորովին նոր է: Նուիրատուներուն փակուած են դռներն: սակաւթիւ խումբ մը կը խորհի, կը գործէ: Երբ այս գործիւնը հրապարակ ելաւ, լաւ ընդունելութիւն գտաւ, զի առաջները ամեն դրամ տուող ընկերութեանց մէջ խօսքի կը խառնուէր, անտի մեծ չիփթութիւններ, բայց յետոյ սկսան աղետալեցողական կոչել Վարչատեսակները, սակայն առանց նուէր տալէ դադրելու, ընդհակառակն:

«Վարչատեսակներ» իր գրութիւնը նոր փոխել է և երեսփոխանական գրութիւնը ընդունած էր, որով այն ևս քիչ թուով մարդկանց կը յանձնէր գործը: «Կրկինանք», բոլորովին ռամկավարական, առանց խտրութեան անդամը ժողովոյ կը մասնակցեն:

Երեքներն ալ իրենց կազմակերպութեան լաւ լինելուն համոզուած էին. շատ խորհրդածելով կազմակերպութեան եղանակն ալ որոշեցին. կը մնար կանոնադրական խել մը հարցեր: Ոչ ոք կուզէր առանց ապագային վրա վտանգ լինելու արդի ընկերութիւններն լուծել: և արդար էին, շատ գիշերներ ժողովելով ընկերութեան հիմունքն ձգեցին և ապագայ կանոնագիրն պատրաստեցին:—Երբ այս ամենը լմեցաւ, կարգը եկաւ խնդիրն ընդհանուր ժողովոց ներկայացնել, զի առանց նոցա քուէին ոչինչ կարելի էր ընել: Բաւական դժուար գործ: Առաջին նիստը «Արարատեան» ըրաւ: Յունուար 20-ին կիրակէ օր ժողովականաց ստուար բազմութիւն մը կեդրոնական վարժարանը կը դուրսդրէր և այս հարցի մասին վարչութեան տեղեկագիրը կը լսէր: «Արարատեան» վարչութիւնը կը յայտարարէր թէ «ազգին ներկայ վիճակին մէջ կեդրոնական զօրաւոր ընկերութեան մը պէտքը գտնուի: այդ ընկերութիւնը աշխարհիս ամեն հայոց համակերպութիւնը և օգնութիւնը վայելելով կարող կը լինի փութով Հայաստանի և Կիլիկիոյ մէջ ազգային դատարարութիւնը ծաւալել, ազգին կրթութեան ներկայացուցիչ կը համարուի և կընձեռէ հայ ժողովուրդին այն ծառայութիւններն որոց կարօտ է:

Այս մեծ ընկերութիւնը պատրաստելու տարերքներն կը գտնուին երեք ընկերութեանց մէջ, որք փորձով ազգին վտանգութիւնը վայելցնին: Ձեռք միմաքառնութիւն մը տեղի կուենայ, շատ կանոնաւոր կերպով վարչութեան ծրագրի պաշտպաններու գլուխն է պ. Մ. Չերազ որ ընտիր ատենաբանութեամբ մը շատ մտքեր կը համոզէ և երբ մանք կըսեն «միջոց մը պէտք է, միջամար յառաջ կընանք երթալ»: Միջոցնք, կը պատասխանէ Չերազը, միջոցն հրէից հետ, մըրցեմք յունաց հետ: Ձեռք ծափահարութիւններ կընկերանան Չերազի խօսքերու: Ժողովականք համոզումը կը գոյացնեն. ներկայ անդամոց երեք քառորդին քուէով պէտք էր դրուէր այս որոշումը: Երեք քառորդէն շատ աւելի քուէ տրուեցաւ, հետեւաբար «Արարատեան» ընկերութիւնը նոյն օրն հանգիստաւոր կերպով որոշեց, ի մի ձուլուել «Վարչատեսակներ»-Արեւելեան և Կիլիկիանց ընկերութեանց հետ, նպատակ դնելով «Հայաստանի և Կիլիկիոյ մէջ կրթութիւն ծաւալելու» վարչատեսակներն ևս, Կիլիկիանցն ալ հետզհետէ նիստեր պիտի ընեն, ամենայն կերպով կընամբ ապահով լինել որ նոցա ևս «Արարատեան» նման պիտի կատարին: Միացեալ ընկերութիւնը իւր առաջին նստին մէջ պիտի ընտրէ իւր անունը, որ պիտի լինի կամ հին անուններէն մին, կամ նոր անուն մը:

Միացեալ ընկերութիւնը ազգային մտաւոր շարժման մէջ առաջին դերը պիտի կատարէ: Թուսիոյ հայքը որ առաջին պատճառը եղաք այս միութեան, ըսելով թէ «մի հակա գործ» պիտի կատարէր, նորա զարգացմանը և մեծութեանը աշխատելու գլխաւոր պարտականութիւնը ստանձնած էր: Մըք ձեռ մտիկ ըրինք, դուք մեզ պիտի օգնէք, և ամենքս միասին Հայաստանի:

Բայց Հայաստանի պիտոյքներն ալ եթէ անթիւ են ըսեմք, չափազանցութիւն ըրած չեմք լինել, և արդէն յայտնի իսկ է: Գեղեցիկ սեռն ալ իւր պարտականութիւններն ունի և որչափ զոհ պէտք է լինիմք որ ընդհանուր շարժման իրենք ևս մասնակցելու փափագ ունին և կը մասնակցեն, ապագայն իրենց ալ հոգ կը պատճառէ: Երբ յունական երկուք որ շատ տխուր մտածութիւններ կը փառատէ: Այս խոհերն զմեզ կը պաշարէին, երբ յունական 17-ի գիշերէ առաւօտ Վերդիի սրահէն դողդալով դուրս կելլէինք: Ձմրան ազգային առաջին պարահանդէսն էր: Օղը սաստիկ ցուրտ, բայց պայծառ երկինք մը, ընտրեալ բազմութիւն մը կը դիմէր ի ինքս, այն գիշերն ներկայ լինելու այն հանդիսին որ կը տրուէր յօգուտ «Վարչատեսակներ»-Հայունաց ընկերութեան: Տիգրիս Լէյաթտ իւր պաշտպանութեան ներքն կառնողը այն հանդէսը, աղետական տիկնայց մասնախումբ մը ջանք չէր ինայէր գործոյ յաջողութեան. արանց խումբ մը իրենց աջակցութիւնը կը նուիրէին, յորս պ. Պետրոս Միսաքեան շատ նշանաւոր աշխատութիւններ յանձն կառնողը, Հանդէսը խիստ շքեղ և սիրուն եղաւ, երեք օրիորդներու ձեռագործ աղւոր գորգ մը վիճակահանութեան դրուած էր: Կայսերական երաժշտաց խումբը յատուկ արտօնութեամբ ներկայ էր: հանգստեան միջոցին օպերայի ընտիր հատուածներ կը նուագէր, և պահ մը զմեզ սարսուռեցոյց, երբ յանկարծ Մայր-Արարատի միւսամազիկ եղանակը հնչեցուց: Շատ ակոթքելի և հրճուալ երեկոյթ մը անցուցինք:

Զմե կարծեր որ առիթ ունեցած լինեմ սոյն ընկերութիւնը ձեռ ծախսեցնելու: Երբեմն գրած եմ վերջանուէր Հայունաց վրա, նոցա ևս քիչ օրէն սուլթանի պաշտպանութեան ներքն մի պարահանդէս կուտան:

Օրթագիւղ, Պօլսոյ ընկերութեանց ծննդեան այդ classique թաղը, մի քանի աղետալուն օրիորդներ միանալով կը մտածեն Հայաստանի վարժակներ պատրաստելու եղանակին վրա: վարժակներու ռուսագլութիւնը կարի իսկ զգալի է, և Հայաստանի մէջ աղջկանց վարժարան բանալն շատ դժուար է: Պարթիկ աղջիկներ են, առանց վարանելու կը վարձեն տուն մը, կը ժողովին 14—15 աղջիկներ, որոց աղքատութիւնը գրաւական մ'է թէ լաւ ամսականով Հայաստան երթան իրենց բազմ մ'է: Իրենք կը սկսեն անձամբ դասախօսել, ուսուցանել նոցա կար և ձեռագործ: կը հոգան այդ աշակերտաց ոչ միայն մտաւոր պէտքերն, այլ նոցա հագուստներն և ուսելիքն իսկ: Շատ անգամ վկայ եղաւ, մինչև ձմրան ամենին ցուրտ օրերն որ պաշտպանութիւնը օրիորդներն իրենց ստանձնած պատրաստութիւնը կերթային կատարել: Չարմաշային այն է որ այս օրիորդներն համեստութիւնը չափազանցութեան կը տանին, և այն աստիճան ունայնասիրութեան նշան մը ցոյց չեն տար, որ մինչև իսկ իրենց դաս տալն չեն ուզեր ծանօթանալ, եւ չեն դաս տուողն, այն է, կանոն: կը հաւատամ հաստատ որ հայրենասիրութեան անկեղծ զգացում մը վերինք կը վառէ, և իրենց սաներն ոչ միայն ուսեալ պիտի լինեն, այլ այսպիսի վսեմ օրինակներ իրենց աչաց առջև ունեն

նալով, նոցա հոգին իրենց ալ պիտի թափանցէ, և ուսեալ ու միանգամայն հարէնասէր վարժակներ պիտի լինեն: Այսպէս ահա կազմուեցաւ և կը գործէ «Վարչատեսակ-Հայունաց» երիտասարդ ընկերութիւնը: Տիգրիս Անիկիւլայեան ընկերութեան նախագահն է և օրիորդ Լուսիկ Վասիլեան առեւնադպիրը: կը լսեմք թէ շատ կանոնաւոր կը լինեն իրենց ժողովներն, թէպէտ մեզ արգելեալ է արքայալէն ներս հայել: Վարչութեան կանոնականցն օրիորդ Թադուհի Պալթազարեան, օրիորդ Նուրեկ Սիմոնեան առեւնապետ և առեւնադպիր, ընկերութեան գանձը յանձնուած է օրիորդ Արուսեակ Շիմանեանի, որ մեծ ջանքեր կը նուիրէ ընկերութեան գանձուն բարդաւածմանը և իւր խիստ կանոնաւոր բարեկարգ հաշուետեւութեամբ կընայ շատերուն օրինակ լինել: օրիորդ Հեղինէ Որդունի կրկնատուարի և ուրիշ կարեւոր աշխատութեանց հոգն ստանձնած է: Երեք միւս անդամոց անուններն լաւ չեմ յիշեր: Սըրա ամենքն են միանգամայն որ անձնակրաբար կը դասախօսեն: Ընկերութեան անդամակցած են Կ. Պօլսոյ, մանաւանդ եւրօպական ափանց, ծանրագլուխ և ընտիր տիկնանց և օրիորդաց դասը: Երբ ընկերութիւնը մէկ կողմէ վարժակներ կը պատրաստէ, միւս կողմէ իւր նիւթական զարգացմանը հոգ կը տանի, որպէս զի վաղընդիպութ Հայաստանի մէջ կանոնաւոր աղջկանց վարժարան մը հիմնելու կարող լինի: Պարահանդէսէն կարծեմք մօտ 5000 բուրլ հաւոյթ եղած է:

«Վարչատեսակ-Հայունաց» ընկերութիւնը Թուսիոյ հայ գեղեցիկ սեռին համակրանացը արժանի է և կարող է Թուսիոյ և Տաճկաստանի հայ կանանց մէջ միութեան զօրաւոր կապերէն մին լինել: Երբ մըք թէ ձեռ ջնքուչ օրիորդներն փութան սիրոյ գրաւական մը տալ այս օրիորդաց, քաջակերական ձեռք կարկառելով նոցա: Իցիկ թէ գտնվէին այնպիսիներ որք ուղեւնան սոցա ջանիցն մասնակցել և այս նպատակաւ ժողովին իրենց ձեռագործներն, ժողովին իրենց բարեկամականաց անդնադործներն, կարգադրեն վիճակահանութիւն մը, հոգ չէ թէ արդիւնք փոքր լինի թէ մեծ: Կրնանք ենթադրել թէ այսպիսի գործ մը ինչ լաւ տպաւորութիւն կանէ, ինչ սէր կազդէ միմեանց, և մեք կը միութարութեմ ու կը ծափահարեմք:

Ընկերութեանց տեղեկութիւններն բաւական զմեզ զառեցուցին, հոգ չէ, վաղուց է այս նիւթի վրա չեմք գրած: երկու օր վերջի թղթատարով կը գրեմք քաղաքական նամակն:

Հայկակ

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵԱԿԱՆ ԹՊԹԱԿՑԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 3/15 փետրվարի: Ձեր ջանքերը պատկեցան, երեք ընկերութիւնների միութիւնը սկզբունքի մէջ ընդունված է պաշտօնապէս: Պարահանդէսը յօգուտ Արեւելեան-Վարչատեսակ ընկերութեան տուեց 6000 բուրլ արդիւնք:

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

ՄՕՍԿՎԱ, 2 փետրվարի: Երէկ հասաւ այստեղ բոլշարական իշխանը: այսօր սուրհանդակի գնացքով նա ուղևորվում է դէպի Ս. Պետերբուրգ:

ԲԵՐԼԻՆ, 2/14 փետրվարի: Ձայնի մեծամասնութեամբ կոմ Արիմ Բայցէրուրգ ազգային ժողովի նախագահ է ընտրված:

ՎԻԵՆԱ, 2/14 փետրվարի: Կիմի ափերին, աւստրիական զօրքերի գրաւած երկրներում խոյութեան նշաններ են երևում: Ձայնիցայից և Վիշգրադից այնտեղից պահապան զօրքեր են ուղարկել: Սէրաէֆի մէջ վեց բատալիօններ կան, որոնք պատրաստ են առաջ խաղալու:

ԲԵՐԼԻՆ, 1/13 փետրվարի: Երէկ բացվեցաւ Բէլիտագը. գահական ձառը խաղաղասիրական է, և յայտնում է, որ օտար պետութիւններ ի ինքն Վերմանիան բարեկամական յարաբերութիւններ մէջ է գտնվում: Գերմանիան ձգտում է ամրապէս ապահովել եւրօպական խաղաղութիւնը: Բացի այս գահական ձառը խոստանում է օրէնքի հետեւեալ ամենաշատ նաւոր ծրագիրներն ինչպէս են, բուլգարի երկամայ շրջանի գործադրութիւնը, պինտարական օրէնքի գործադրութիւնը, սօցիալականների վրա գործադրվող օրէնքի տեղադրութիւնը, և խաղաղական ուղիւստի կղզիների հետ առեւտրական դաշնագրութիւնը:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ